Պազտին կոմսը Տիրերիոյ կողմերը կը յարձակի Մամռուբի (Պարսիկ) բանակին վրայ, որ յաղթանակ տանելով կը կործանէ Թաւրոզ լերան հայ, յոյն և լատին վանքերը։

Ծովակիմայ եւ Աննայի տան տեղւոյն վրայի հայկական (հոյակապ) եկեղեցին, զոր Սալաէտտին կը վերածէ մսրապահի Սալահիէ անունով։ Անոր աւերակներուն հողերը Օսմանցիք կը թափեն մերձակայ Պրազտիկէի աւազանին մէջ։ 1856էն ի վեր լատինները տիրած են անոր և հիմակ կը գործածեն իբր վարժարան։ Ծովակիմ–Աննայի ընակարանի եկեղեցւոյն հայկականութեան ապացոյցներ են մեր Ձեռագրաց Մատենադարանի «Ի տանն Ծովակիմայ եւ Աննայի» եղած ընդօրինակութիւնները եւ 1728ին Հաննէ վարդապետին անկէ բերած ու Ծարենցին գրան վրայ ազուցած խաչքարը։

Ս. Մարկոս Աւետարանչի վանքն ու եկեղեցին գերեզմանատունով հանդերձ եբուսաղէմէն գնուս Բեթղեհէմի ճամբուն վրայ (Աստուածատուր եպս., Պատմ. երուսաղէմի, էջ 218)։

Ձեռագիրներ.— Կիլիկեան չրջանին առաւել չափով կը ծաղկի հայ գրչութիւնը։ Կիլիկիան եւ Հայաստանի վանքերուն պէս երուսաղէմի և առ հասարակ Ս. Երկրի վանականներու գլխաւոր զբաղումը, Ս. Տեղեաց պաշտպանութենէն զատ՝ կ'ըլլայ ձեռագիրներու ընդօրինակութեամբ բազմացումը։

Մեր վանքերուն մէջ պատրաստուղ ապագայ վանականները, որոնք երբեմն համբաւաւոր ուսուցիչներ ալ ունեցած են, ինչպէս Վարդան Արեւելցի(*), Տրիգոր Վրդ. փիլիսոփայ և այլք որոնք Ս. Դրոց ուսման հետ զուգընթացաբար հմուտ եղած են նաև արտաքին ուսումներու։

Նաչակրաց չրջանէն մեզի հասած են չատ թանկագին ձեռագիրներ, որոնց յիշատակարաններն են գլխաւոր աղբիւրը նաչակրաց վերջի չրջանին հայ երուսաղէմի պատմութեան։

Մեր Ձեռագիրներու կարգին կ'արժէ յիշել նաեւ իբր նուէր տրուած անգին յիշատակները, որոնցմէ՝ կեռան թագուհւոյն երկաթագիր մագաղաթեայ Աւետարանը։

Պօղոս Ա. Արարատեցւոյ թիւ 1 ձառընտիրը որ 400 տարի կարդացուած է Ս. Ցոգրայ սեղանատան մէջ։

Ազգային եկեղեցական կեանքի մէջ, ինչպէս միշտ, այս չրջանին մանաւանդ Հայ երուսաղէմ՝ Ս. Տեղեաց իրաւանց պաշտպանութեան կարգին՝ նախանձախնդիր եղած է նաեւ Հայ եկեղեցւոյ Ուղղափառ գաւանութեան անաղարտ պահպանման։ Ժամանակակից Սիմոռակալներէն Սարգիս պատրիարք (Սիմոռ քարթլացած 1281–ին) ուղղամիտ և հաստատամիտ անձնաւորութիւն մը, արիւաբար ծառացած է Սոսյ Սիմոնին լատինամոլ ձեռնարկներուն դէմ։

ՋՕՕՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱԼԴ ԲԱՌԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԷՋ

Անցեալ դարու հեղինակաւոր բանասէր–պատմաբաններէն մէկը, Դը Լագարդ, կը գրէ(1) որ երբ լոյս տեսաւ իր առաջին աշխատութիւնը հայերէնի մասին, Էօժէն Բիւռնուֆ, Արեւելագիտութեան հիմնադիրներէն մէկը, իրեն գրեց հետեւեալը։

"J'ajouterais que j'ai lu avec un vrai plaisir et un grand fruit votre dissertation sur l'analogie des lettres arméniennes avec le Sanscrit. Vous êtes, à mon avis du moins, dans la bonne voie, je dirais même dans la seule que puisse conduire à des résultats sûrs. Il faut appliquer à l'étude des langues les procédis rigoureux d'une sorte d'anatomie Comparée. Cela est surtout nécessaire pour celles, qui, comme l'Arménien, cachent sous des caractères tout à fait spéciaux le fonds par lequel elles se rattachent à des bases actuellement oubliées».

(*) Որ 12 տարի երուսաղէմ մնացած ու գրեթէ չորեքեան գեղեցիկ յիշատակներ թողած է։

(1) Paul de Lagarde. Symmicta, Gottinque, 1880։ Ներածութիւն, էջ III։ Լագարդի առաջին փորձերն լոյս տեսան 1850էն սկսեալ։

Այսուր արդէն ներկայացուցած եմ վերջին մի քանի տարիներու գիտական հարցասիրութիւնները հայոց լեզուի քաղկացուածքին մասին(²)։ Պէտք է աւելցնել նաեւ Հրօզնու(³) ենթադրութիւնը եւ Ֆրիդրիխի կարծիքը(⁴)։

Սակայն 50 տարի առաջուան նախատեսուած մոռացեալ լեզուներէն, գոնէ անոնցմէ մէկ քանին, ինչպէս խալդերէնը և խառնիտական 5–6 բարբառները, լծո՛ղ թէ Ակատական լեզուախումբը։

Լպարդի վերոյիշեալ գործերն այլեւս կ'անցնէին 1931ի աշնան, երբ լոյս տեսաւ Դր. Է. Կարտոի Geschichte der Armenischen Philologie (Հայդելբերգ, 1930) և քիչ յետոյ՝ անոր Atlantis (Հայդելբերգ, 1931)։ Միաժամանակ իրար եռեւէն լոյս տեսան Դր. Եահ. Ֆրիդրիխի մի շարք եզական փորձերն խալդուարատական լեզուի եւ քերականութեան վրայ, որոնք պիտի յիշուին ստորեւ։

Ուշադրութեամբ քննելէ եւ համադրելէ յետոյ մնացեալ 1931ի վերջերն լոյս տեսած բանասիրական հրատարակութիւնները, աւելցուցած էի հետեւեալ տողերը.— «Մեզի լեզուի նորագոյն ուղիղ ընթերցումներն՝ մերացած բաղդատական լեզուաբանութեան ամբակուռ կանոններէն մեր առջեւ կը բանան հայ բառամթերքի անպարագրելի հարստութիւնները։ Հայ բանասիրութիւնն ընդհանրապէս, եւ հայ լեզուաբանութիւնը մասնաւորապէս, պիտի գործեն մեծագոյն ախալը՝ ընտրելով գիտական հետազոտութեանց նեղ եւ սահմանափակ չէրպէին։ Հիւբշմանի(⁵) echtarmenisch (զուտ, սկզբնական-հայերէն) գլխին տակ վերեղած բառերն, ինչպէս նաեւ «պարսկական» կոչուած բառերի առատարագոյն մասը, ածանցուած կրնան լինել գլխաւորապէս Խորխոր-Մխտանիական արմատէն։ Դեռ անհնարին եղաւ եղծանել Իօզազ-Բէօյի խառատի պեանէն գալս եկած խուրրի գնագրերն մանաւանդ Դիւպսոմիլ վիսիրդուխեան խուրրիական Բեկորը(⁶)։ Նոյնպէս անընդհատելի կը մնայ մօտ 50 տարի առաջ Թէլ-էլ-Ամառնայի մէջ գտնուած Միտաննու Տուշրաթա թագաւորի նամակը՝ խուրրի-Միտաննի լեզուով(⁷)։ Ուրեմն առայժմ անհնարին է ոեէ կարծիք յայտնել Խուրրի-Միտաննիական(⁸) և խալդի լեզուներուն յարաբերութեանց մասին։ Այսու ամենայնիւ պատմութիւնն եւ աշխարհագրութիւնը հակամէտ են à priori թելադրելու որ Նայիրի համագաշնակցութեան մէջ գերակայութիւն ձեռք բերող խալդ ժողովուրդը(⁹) իր լեզուն և մշակոյթը ժառանգած կրնայ լինել իր նախորդներէն, ճիշտ ինչպէս հայ ժողովուրդը ժառանգից իր անունն, լեզուն եւ քաղաքակրթութիւնը՝ իր խալդի նախահայրերէն։

1931ին վերոյիշեալ տողերն գրելէ յետոյ ծագած են նոր լոյսեր։ Ֆրանսական պեղումներն ի Սիւրիա, Գերմանականներն՝ Փոքր Ասիոյ զանազան կողմեր, և մանաւանդ Ամերիկեաններն՝ Նուզու եւ Հիւսիսային Իրաքի այլ մասերի մէջ, ի յայտ բերած են լրացուցիչ եւ լուսաւորող նոր հիմքեր։

Այդ հիմքեր վայրիվեր կը շրջին Արեւմուտքի բարձրագոյն գիտնականութեան 400 ամեայ դասական աւանդութիւններն։ Գրեթէ եւ Միկինեան մշակոյթի վերջին գիւտերն մանրամասնօրէն քննելէ յետոյ, պրոֆ. Է. Բէթէ(¹⁰) որ 40 տարի նուիրուած է հիմ-

(²) Manis. No. 67 (sept. 1936), էջ 102-103. Ծանօթութիւնք։

(³) Bedrich Hrozny: Archiv Orientalny. III (1931), էջ 286։

(⁴) Joh. Friedrich: Einführung ins Urartische..., 1933. Նախաբան, էջ III։

(⁵) H. Hübschmann: Armenische Grammatik, 1897, Սթրասպուրկ. Մասն V։

(⁶) A. Unguad: Zeitschrift fur Assyriologie neue Folge. I. (1924), pp. 133-140։

(⁷) F. Borh. Die Mitanni-Sprache. ի Mitteilungen der Vorderasiatisch-Aegypt. Gesellschaft. 14րդ տարի, 1909, 1-2 պրակք, էջք 123 յաջորդք։ Հարցին քննութիւնը տեսնել A. Götze: Kulturgeschichte des alten Orients. 1933, էջ 58-59, և ծանոթ. 6, էջ 58։

(⁸) A. Götze: Hethiter, Churriter und Assyrer. 1936, Oslo, էջ 108. հմմտ. նաև Fr. Thureau dangin, ի Syria, 12րդ տարի (1931), էջ 234։

(⁹) Հինուտած պատմական-աշխարհագրական լրատակ փաստերի վրայ, կը միանամ Պրոֆ. Աստ. Խաչատրեանի և Ա. Գէօյգէյի, մեր ժամանակաշրջանի Պրոֆ. Հէյմանհաուսլտի դրոյթը (թէկ) թէ խալդեր բնիկ չէին երկրին մէջ, այլ եկան Արեւմուտքէ։ Յարգելի պրոֆ. Լ-Հաուսլտը յառաջ բերած է փաստեր՝ հիւրտ իր պնդումը հակասող, բայց կը թուի որ չի գիտակցիր այդ իրողութեան։

(¹⁰) E. Bethe. Troia, Mykene und Agamemnon. ի Rheinisches Museum für Philologie 80րդ հատոր

նպատակ ուսումնասիրելու համերաշխ, կը գրէ հետեւեալը. «Այո՛, գեղեցիկ են կրնտէլ պալատի գիւտերն, թէեւ ո՛չ մի կերպով աւելի գերազանց քան նախապատեան նմանօրինակ գիւտերն. սակայն խնդրոյն պէ՛տ համր և խուլ են հին–հելլէնական գիւտերն, անոնք չունին լեզու մեզ խօսելու իրենց պատմութեան մասին, անոնք չունին յարակից գիր ու գրութիւն մեզ տալու իրենց ժամանակին եւ աւանդութիւնն, ինչպէս ունին «բարբարոս» ժողովուրդներն Նեղոսէն մինչեւ Կովկաս լեռներ, և կիլիկիայէն մինչեւ Տիմա–էնտ» եւայլն։ Այդ չատ ընդարձակ նիւթ է, թէեւ սերտօրէն կապ ունի այս գրութեան հետ։ Այստեղ սահմանափակ է իմ նպատակը, այն է, ներկայացնել խոշ որոշ բառերի ստուգաբանութիւնը՝ հայ մատենագրական աւանդութեան լոյսերով, եւ կամ ինձ ծանօթ գաւառաբարբառների մէջ վերապրող հասկացողութիւններով։

Առանձնապէս ընտրած եմ յատկանիշական բառեր, ի նախապատրաստութիւն ուրարտուի ընդարձակ պատմութեան եւ տեզագրութեան, որոնք պիտի ապացուցանեն հայկական գրաւոր աւանդութեան եզակի վաւերականութիւնը։

Եթէ մեր լեզուաբաններէն ընդունուին այս ստուգաբանութիւնները, անոնք պիտի սփռեն անակնկալ լոյսեր խոշ ժողովրդի ընկերական, կրօնական և գիւղատնտեսական հասկացողութիւնների վրայ։ Առանց կարեւոր մասերն հաւատարմօրէն պահպանած է հայ հին պատմագրութեան եւ հայ ժողովրդական վէպն ու բանահիւսութիւնը։

Կարող է պատահել որ խոշ լեզուն կը բովանդակէ նաեւ հնդեւրոպական ծագում ունեցող բառեր։ Ինչպէս պիտի տեսնենք հրուգման, մէյէ և այլ լեզուաբաններ հայերէն որոշ բառեր, ինչպէս օրինակ ածել, կը համարեն հնդեւրոպական արմատէ։ Բայ նէն դուրս կուգայ որ ածել բայը մեզ եկած է խոշ լեզուէն։ Ցամենայն դէպս, ուշադրութի պատմութեան գիտական ուսումնասիրութիւնը պիտի յարուցանէ մի շարք քննական խնդիրներ, որոնք անշուշտ չեն կապուած են հայ ազգի ցեղախօսական բաղկացութեան և պատմական սկիզբներուն հետ։

Այս անգամ ընտրած եմ մի քանի բառեր միայն։

•

(ա). ar-ni-ú-she, հայերէն առնուագեն. հաստատելու համար խալդական առնիուեբաուին նոյնացումն մեր գաւառական առնազեղի հետ, նախ պէտք է ներկայացնել հայերէն բառը բնագրական հատուածներով։ Նոր բառգիրքը (Վենետիկ, 1836, Ա. հատոր, էջ 307), բառը կը բացատրէ որպէս զեմ առն պատերազմողի։ Մեր մատենագրութեան մէջ այդ ստուգաբանը գրեթէ միշտ միացուած է ապագեղ բառին։ Ագաթանգեղոս ունի հետեւեալ տեղիքը. «Իսկ նորա (Տրդատ) առեալ զերիվարն, և զասպազինն նորին և զիւր զառնագինն առեալ կապեալ ի թիկունս . . . անցանէր ընդ գետն եփրատ»(11)։ Ցովհաննէս կաթողիկոս. «. . . ահագին իմն դղրդմամբ ճակատամարտից ընդդէմ յարդարէին (Արտա և Վասակ Բագրատունիներ) և արիաբար առնաբար առնագեղն ապագեղն ի վերայ չահատակեալք առ ի քթթել ականն վազվազակի հերձեալ ընդ մէջ գլխոյրս ասպարափագ ոգմին բազմութեան ընդ կրունկն գարձուցանէին . . .»(12)։ Աւելի կամ պակաս բառերով կան նմանօրինակ տեղիք Մ. Խորենացու և Թովմա Արծրունու մօտ։ Ինչպէս պիտի տեսնենք ստորև վերոյիշեալ երկու մէջբերումներն, մանաւանդ Ցովհաննէս կաթողիկոսինը, լրապէս կը համապատասխանեն խալդական առնիուեբ բառին։ Հիւբշման(13) բառս կը գնէ ապագեղն գլխի տակ եւ կը թարգմանէ Männerrüstung, gerüstet, ըստ մեծնոյնի համապատասխան Նոր բառգիրքի վերեւ նշանակեալ իմաստին։

Իր սկզբնական ընթերցումներէ մէջ Սէյս(14) սովորաբար կը կարդար ar-ni-hu-si-

(1931), էջք 222-224։ Rheinisches Museum-ը Ուրեմաւքի գիտնականութեան ամենապատկառելի պարբերաթերթն է։

(11) Ագաթ. ծթ-202. տպ. Շուկասեան, 1914, էջ 108։

(12) Ցովհ. կաթ. տպ. Մ. Էմին, Մոսկուա, 1853, էջ 161։

(13) H. Hübschmann։ Armenische Grammatik, էջ 108, no. 61. ապագեղ գլխին տակ։

(14) A. H. Sayce. Journal of the Royal Asiatic Society. XIV. 1882, էջ 571 (no. 37, տող 16. no. 38, տող 3 եայլք)։

ni-da և կամ հզակի ուղղական ձևն ar-ni-hu-si, և կը թարգմանէր citadel = միջնաբերդ կամ կողպատուռ։ Սակայն իր ամենավերջին փորձերի մէջ Սէյս(15) համոզուեցաւ որ սխալ էր իր առաջին թարգմանութիւնը եւ փոխեց բառին իմաստը՝ լրբեւ նուաճում = conquest:

Նորագոյն ուսումնասիրողները այժմ կը թուին մերձեցած լինիլ բաւ մուն իմաստին։ Վերացի գիտնական Մ. Մերձիվելի(16) բառը կարդաց ուղիղ, այսինքն ar-ni-ú-she, բայց թարգմանութիւնը այնքան յայտնի չէր։ Այժմ ևս. Ֆրիդրիխ ներկայացուցած է թէ՛ քերականական կազմութիւնը եւ թէ՛ բառին ուղիղ թարգմանութիւնը՝ համաձայն հայ մատենագրական աւանդութեան։

Ֆրիդրիխ(17) քննելով Սարդուր Գ.ի (750–733 Ն. Ք.) մի արձանագրութիւնը կը գրէ որ «Դեռ լսվճակի չէր ընդդիմելու arniushinili (յաղնակի արմատ ածանցով) բանին նշանակութիւնը։ Մի կողմէ բառս կը նշանակէ թագաւորի ռազմական գործերն (Kriegstaten), միւս կողմէ ըստ երեւոյթին՝ «արուեստական չէնքեր»։

Երկու տարի յետոյ Ֆրիդրիխ(18) նեղկայացուց հետեւեալը։ Տալէ յետոյ Սէյսի վերոյիշեալ տեղիքը եւ Մեսչանինովի(19) մեկնութիւնը, նա յաւելի բերած է Արգիստի II-ի արձանագրութեան պատկանելի տողերը։ Խալդի թագաւորը կը յարձակի Մանա երկրի վրայ, կը պատմէ իր յաղթութիւնն և աւարը, ապա

Տող 40.—

Argishtishe alie Ḫaldia ishtinie
Արգիեշի ասէ ընորհիւ Խալդի Ած.ոյ անդ(?)

Տող 41.—

inanili arniushinili I mu za-adubi
Այս գործ(?) մեկ տարում կատարեցի։

Ապա իր մեկնաբանութեան մէջ Ֆրիդրիխ(20) բացատրելէ յետոյ Ինաիլի առնիուշինիլի ոճին քերականական առանձնայատկութիւնը կ'ուելցնէ որ «առաջամաքար և մօտաւորապէս բառը կը նշանակէ գործ, արարք։

Պէտք է նկատել որ վերոյիշեալ գիտնականներէն ոչ մէկը ծանօթ է հայ մատենագրական աւանդութեանց եւ կամ լեզուին. այդու հանդերձ Սէյս (նուաճում) եւ Ֆրիդրիխ (գործ, արարք) միանաքար կուտան բառին մերձաւոր իմաստը։

Խալդի առնիուշ գոյականը, հաւանաբար հաւաքական մի անուն, կը նոյնացնեմ մեր առնգագնի բառին հետ, որ կը նշանակէ հերոսական ռազմական սխրագործութիւն, ճիշտ ինչպէս կը նկարագրէ Ծովհաննէս կաթողիկոսը։

Արգիշտի Առաջինի ռազմական սխրագործութիւնները խալդ լեզուով Մանա երկրին մէջ եւ Ասորեստանցւոց դէմ կարծես լինի գրական նախատիպը Սչոտ և Վասակ Բագրատունիների սխրագործութեան։

(15) a-sha-a-zi-e, հայերէն ազատ(?) Խալդ լեզուի ամենամաքի բառերէն մէկն է այս ազազիհ ձայնային հնչումը՝ չրջապատուած նոյնչափ դժուարին ու անհասկանալի անծանօթ բառերէ։

Նախ պէտք է ներկայացնել բառին պատմութիւնը։ Գոնէ ցարդ ազազիհ բառը գտուած է երկու տարբեր տողերի մէջ միմիայն Մենուայի արձանագրութեան մէջ ի Դայար(21), այլապէս կոչուած Եազլի–տաշը,

(16) A. H. Sayce. I. R. A. S. 1929, էջ 307 (no. 94, տող 52 հայլը)։

(16) M. V. Tseretheli. Die Neuen haldischen Inschriften König Sardurs von Urartu. ի Sitzungberichte der Heidelberger Akademie der Wissenschaften: Phil-hist. klasse. 1928. A. տող 29, B. տող 54, հայլը։

(17) Joh. Friedrich: Zeitschrift für Assyriologie Neue Folge VI. (1931). էջ 284. ծանօթ 3։

(18) Joh. Friedrich. Einführung ins Urartäische. ի Mitteilungen der Vorderas-Aegypt. Gesellschaft. 1933. Գ. պրակ, էջ 55։

(19) I. Mesbchaninov. Khaldovedenii. 1927. բազմ., էջ 255։

(20) Friedrich. քան վերնոյն, էջ 59։

(21) C. F. Lehmann-Haupt: Corpus Inscriptionum Chaldicarum. Textband, I. (1928). էջք 51–52, ուր պետեզուած է Մենուայի այդ արձանագրութեան լիակատար արտագրութիւնը։ Իսկ տեպագրութիւնն եւ անոր դիրքը, տեսնել Armenien Einst und Jetzt. Vol. II. II. (1931), էջ 778։ Հարկ կը տեսնեմ ասելցնելու որ Լէյման-Հաուպտ այդ արքավայրին կը կիրարկէ էշէք-Իլիաս նախատեսական անունը, մինչդեռ հայ բնիկներն խորէնէզ կ'անուանեն, ի յիշատակ Ս. Գերգին։ Այդպիսի անպատկառ տայթաքաւիներ շատ կան անոր մօտ։

Արածանու վերին հովիտին մէջ ի Բագրեւանդ, Մանազկերտին մօտ 10 մղոն հիւսիս-արեւմուտք։ Ցատկապէս կոփուած և ղօրկուած մի բարձր ժայռի վրայ՝ բազկացած կապոյտ-կանաչազոյն պիտուէ, Մենուա արձանագրած է իր ամենաճոխ յաղթանակները մէկը։ Սա է նաեւ ամենահաւ եւ ամբողջապէս անվթար խօսդ սեպագրութեան նմոյշը։

Խօսդ պատմագրութեան բառամթերքի ամենէն ռազմական ոճերով Մենուա կը պատմէ իր արշաւանքը Տայոց երկրի Ուտուպուրիին թագաւորին դէմ, անոր նուաճումն և բազմատեսակ տուրքերի գանձումն՝ ընդ որս եւ ոսկի եւ արծաթ։

Սակայն Մենուայի այդ 36 տողեայ արձանագրութեան մէջ կան բազմաթիւ բառեր և նոյնիսկ մի ամբողջ տող որոնք կը մնան անբացատրելի։

Մորթմանի(22) եղաւ առաջինը եզծելու այդ արձանագրութիւնը՝ իր հարկէ հանգերձ ակզբնական անխուսափելի սխալներով։ Նա այդ բառը կը կարդայ a-sa-a-zi-e (տես անդր, էջ 514, տող 21, եւ մեկնաբանութիւնը՝ տողք 545–546) և բազդատական-լեզուաբանական մի քննութենէ յետոյ բառը կը նոյնացնէ հայերէն շարժել բային հետ։

Սէյս(23) որ դիմաւորապէս օգտուած է Մորթմանի վերոյիշեալ գործերէն եւ Ս. Գիւլտէի վերծանումներէն, 1882ին հրատարակեց մի չատ աւելի ուղիղ ընթերցում, և ըստ երեւոյթին՝ աւելի բանաւոր մի թարգմանութիւն։ Դժբախտաբար ձեռքիս տակ չունիմ Հայր Մանդալեանի աշխատութիւնը՝ անկէ եւս օգտուելու համար։ Բուռն դժուարութիւնը կը կայանայ ոչ միայն առանձին նշանակութիւնը ճշտելուն՝ այլ եւ յաջորդ տողի առաջին բառի հետ անոր ունեցած հաւանական քերականական յարաբերութիւնը որոշելուն մէջ։

ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ

(Շարունակելի)

(22) A. D. Mordtmann: Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften vom Van und der Umgegend. ի Zeitschrift der deutschen Morgenländischen Gesellschaft. XXXI. (1872), էջք 544-546։

(23) A. H. Sayce. Journal of the Royal Asiatic Society XIV (1882), no. 30, էջք 540-43։

Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Կը շարունակէ դեպի բարւոքում իր բնականոն ընթացքը. բժիշկը մասնակի երեսով երկիցս բացաւ գանձ փաթոլիճի սրունքին՝ վիրաւորուած կեցերուն համապատասխանող կեցերը եւ հաստատեց ոսկրին ամրացնուած ըլլալը։ Հաւանաբար, երկու կամ երեք շաբաթ յետոյ, Սրբազան Հայրը պիտի կարենայ Աստուծով իջնել անկողինէն, ուր է այսօր (29 Յունվ.) հառաչուն օրերէ ի վեր։ Ցաւերը անհետացած են բոլորովին. ջերմութիւնը գրեթէ բնականոն է, բարձրացած չլլալով աւելի քան 37 աստիճանը։ Միակ նեղութիւնն է ձանձրութիւնը անշուշտ, որուն սակայն հաջութեամբ կը յաղթահարէ, ընթերցումով, փոխ ի շահ պատշաճական պատրաստութիւնով եւ գրելով։ Ընկերացնած դուռեթան մէջ է որ գրեց «Սիոն»ի Յունուարի եւ Փետրուարի խմբագրականները եւ իրմէ ստորագրուած ուրիշ գրութիւններ։

Միաբանիս շարունակ կ'այցելեն. համակրական արտայայտութիւնի կը շարունակուին ամէն կողմէ. Լատինաց պատրիարքը, միւս հոգեւոր պետեր եւ միաբանութիւններ դարձեալ այցելեցին. Երուսաղէմի կառավարիչը՝ Մր. Քիղրոյ, որ ճանիցս փոխանորդ եր ղրկած, իմին անձամբ եւս այցելեց, նոյնպես հիւպատոսներէն ոմանք, մեր Ամանորին առթիւ։ Արտասահմանէն, մինչեւ Ամերիկայէն եւ Հնդկաստանէն եւս, եւսած են յաճախացական եւ բարեմաղթական հեռագիրներ եւ ճաշակներ։ Առաջին հեռագրողը եղաւ Արմենակ Պէյ Կամսարական՝ Եգիպտոսէն, ապա բարեւուր Դալուս Պէյ Կիւլպենկեան՝ Բարիզէն, երկիցս. Բարեգործականի կեդրոնը, Տիգրան Կամսարական, Արշակ Զօպանեան, Տիկին Քեօլեան՝ Նիսէն, Ասուրց կաթողիկոսը՝ Համայէն, Պոսթոնեցւոց Պատրիարքը՝ Գաճիրեանց, Բարեգէն Արճեպս.՝ Նիւ Եորքէն, Բոսֆ. Ագոնց, Հ. Ակինեան՝ Վիեննայէն, Տ. Վռամշապուհ Սրբազան, բանալից դասը եւ Սկեղեցւոյ Հոգաբարձութիւնը՝ Բարիզէն, եւ բանի մը հարիւր ուրիշներ, սանմանակից եւ հեռասահման երկիրներէ։ Շաբաթ մը առաջ հասաւ նոյնպես Ամենայն Հայոց Վեհ. Ս. Հայրապետին հեռագիրը, որով Ն. Ս. Օծութիւնը իր վրդովմունքը կը յայտներ եւ մարդաբներ կ'ըներ, եւ կը հաղորդէր թէ Միաբանութեամբ հանդերձ բժշկութեան ապօքիներ բրած են Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ։